



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ
ՀՐԱՄԱՆԸ**

03 2018 թվականի N. 36-Ն

**ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ
ԵՐԿԱՐԱԶԳՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 42-րդ և 44-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԲՓ 123 «Շրջակա մրջավայրի վրա ազդեցության փորձաքննության» պետական փորձաքննական դրական եզրակացությունը, «ԳԻ ՄԵՏԱԼՁ ԻՆՎԵՍԹՄԵՆԹ ԼԻՄԻՏԵԴ» ՍՊ ընկերության 2017 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 01-15 գրությունը, Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԳԻ ՄԵՏԱԼՁ ԻՆՎԵՍԹՄԵՆԹ ԼԻՄԻՏԵԴ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ընկերություն)՝ ՀՀ Սյունիքի մարզի Դաստակերտի տարածաշրջանի հարավային հատվածում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու 2012 թվականի հոկտեմբերի 20-ի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹՎ-29/114 թույլտվության մեջ կատարել փոփոխություններ՝

1) թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 2 տարով, սահմանելով մինչև 2019 թվականի դեկտեմբերի երեսունը (սույնը հանդիսանում է երկրաբանական ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետի 2-րդ երկարաձգումը),

2) տրամադրված տարածքի մակերեսը նվազեցնել 435.0 հա-ով, սահմանելով 405.0 հա, հետևյալ կոորդինատներով՝ 1.X=4356342 Y=8589900; 2.X=4354992 Y=8589900; 3.X=4354992 Y=8592900; 4.X=4356342 Y=8592900 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով):

2. կատարել փոփոխություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դաստակերտի տարածաշրջանի հարավային հատվածում օգտակար

հանաճոնների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման թիվ ՊՎ-114 պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր):

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) օգտակար հանաճոնների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվության ժամկետի երկարաձգման դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս՝ 10-օրյա ժամկետում պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանաճոնների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության, ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխված տարբերակները,

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրության իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:



ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ